

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ **Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին**

Արտաքին կապերի վարչության Եվրասիական տնտեսական միության բաժնի պետ (ծածկագիր՝ 22-34.4-Ղ4-2)

Հիմնական գործառույթները՝

1. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կառույցների հետ էներգետիկայի և բնական պաշարների բնագավառում համագործակցության իրականացումը.
2. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էներգետիկ շուկաների՝ ընդհանուր էլեկտրաէներգետիկական և գազի շուկաների ձևավորման հետ կապված գործառույթների իրականացումը.
3. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներին առնչվող միջազգային պայմանագրերի մշակման, համաձայնեցման, ստորագրման և վավերացման ներպետական ընթացակարգերի աշխատանքները.
4. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության կառույցների հետ բանակցությունների անցկացման, հանդիպումների կազմակերպման, հանդիպումների արձանագրությունների հիման վրա առաջարկությունների և կարծիքների կազմման և ներկայացման աշխատանքները.
5. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներին առնչվող գործառույթների իրականացումը այլ գերատեսչությունների և կառույցների հետ.
6. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի, Խորհրդի, Միջպետական և Բարձրագույն Խորհրդի նիստերի շրջանակներում էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների, զեկույցների, զրույցի կետերի կազմման և ներկայացման աշխատանքները, անհրաժեշտության դեպքում մասնակցում է ՀՀ կառավարությունում կայանալիք խորհրդակցություններին.
7. Կազմակերպում է Եվրասիական տնտեսական միության էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներին առնչվող փաստաթղթերի թարգմանության աշխատանքները.
8. Կազմակերպում է իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները.
9. Մասնակցում է Վարչության աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
10. Ներկայացնում է զեկուցագրեր՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող աշխատանքների վիճակի մասին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ
- Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:
- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև մրցույթի արդյունքում պաշտոնի նշանակումը:

- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 19.08.2019թ.
- Աշխատավարձի չափը՝ 256623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:
- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am
- **Ընտրություն կատարելու եղանակն է՝** դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: